ՕՏԱՐԵՐԿՐՅԱ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ) ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(2025-2026 **ուսումնական տարի**)

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը հաստատելու մասին» N 1295-Ն որոշումը, մեկնարկում է օտարերկրացի և սփյուռքահայ դիմորդների փաստաթղթերի ընդունումը՝ 2025-2026 ուսումնական տարում Հայաստանի Հանրապետության մասնագիտական արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ընդունվելու համար:

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» (ընդունված է 2024 թվականի մայիսի 22-ին) օրենքի պահանջներով՝ օտարերկրյա քաղաքացիները ովքեր վերջին երեք տարիներին սովորել և ավարտել են Հայաստանի Հանրապետությունում, մասնագիտական արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ ընդունելությանը մասնակցում են ընդհանուր հիմունքներով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված կարգով:

Մասնագիտական կրթության համապատասխան մակարդակում մշակույթի, սպորտի, բժշկության ոլորտների և լիազոր մարմնի սահմանած այլ որակավորումների համար ՄՈՒՀ ընդունելության պահանջները ներառում են ստեղծագործական և կատարողական արվեստի կամ ֆիզիկական կարողությունների ստուգում (քննություն), իսկ բժշկության ոլորտի առարկայական քննության դեպքում՝ հանրակրթական համապատասխան առարկայի (բնագավառի) ծրագրի գիտելիքների և կարողունակությունների ստուգում:

Օտարերկրյա քաղաքացիները՝ սփյուռքահայ և օտարազգի դիմորդները, փաստաթղթերը պետք է ներկայացնեն Նախարարություն հետևյալ ժամկետներում՝

/h	Կրթական ծրագիր	Փաստաթղթերի ներկայացման ժամկետ
	Վճարովի առկա ուսուցմամբ մասնագիտական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում,այդ թվում՝ նախապատրաստական դասընթացում,ընդունելության համար	2025թ. հուլիսի 3-ից մինչև օգոստոսի 15-ը ներառյալ
	Վճարովի հեռակա ուսուցմամբ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունելության համար	2025թ. հուլիսի 3-ից մինչև հոկտեմբերի 11-ը ներառյալ

Փաստաթղթերը Նախարարություն ներկայացվում են՝

- դիմորդի կողմից անձամբ կամ նրա լիազորված անձի կողմից,
- մասնագիտական արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության կողմից
- օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով:

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում՝ համաձայն կից ներկայացված ձևի,
2. Դիմում-հարցաթերթիկ՝ համաձայն կից ներկայացված ձևի,
3. բժշկական տեղեկանք՝ ընդհանուր առողջական վիճակի մասին (սույն տեղեկանքը կարող է տրված լինել նաև Հայաստանի Հանրապետության բժշկական կազմակերպությունների կողմից),
4. անձնագրի պատճենը,
5. սփյուռքահայ դիմորդների համար՝ ծննդյան վկայականի պատճենը՝ նոտարով վավերացված կամ մկրտության վկայականի պատճենը,
6. կրթական աստիճանի վերաբերյալ ավարտական փաստաթղթի պատճենը (գնահատականներով)՝ թարգմանված և նոտարական, իսկ առանձին երկրների դեպքում՝ նաև միջազգային վավերացմամբ (ապոստիլ),
7. 3x4 չափսի 4 լուսանկար,
8. ինքնակենսագրություն (CV)՝ հայերենով, ռուսերենով կամ անգլերենով,

Դիմորդի կողմից ներկայացվող փաստաթղթերի փաթեթը ոչ ամբողջական կամ թերի լինելու դեպքում դիմորդի փաստաթղթերը չեն ուսումնասիրվելու և ընդունվելու:

Դիմորդը կա՛մ նրա լիազորված անձը, կա՛մ ուսումնական հաստատության ներկայացուցիչը վերոնշյալ կետերով (1-8) պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետներում պետք է ներկայացնեն Նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչություն կամ պահանջվող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները պետք է ուղարկեն secretariat@escs.am էլեկտրոնային հասցեին:

Գիտելիքների գնահատման ընթացքում դիմորդը, կա՛մ նրա լիազորված անձը, կա՛մ ուսումնական հաստատության ներկայացուցիչը պարտավոր են Նախարարության էլեկտրոնային հասցեին ուղարկած 1-8-րդ կետերով պահանջվող փաստաթղթերի բնօրինակները ներկայացնել Նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչություն:

Համաձայն փաստաթղթերի ներկայացման ժամկետների՝ դիմումներն ու փաստաթղթերը Նախարարությունում ընդունվում են աշխատանքային օրերին, ժամը 10:00-ից մինչև 17:00-ը, ընդմիջում՝ 13:00-ից մինչև 14:00-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Նախարարություն՝

- սփյուռքի հետ կապերի բաժին (հեռ.+374 10-599-647),
- արտաքին կապերի բաժին (հեռ.+374 10-599-646):